

ԹՈՒՐԵՆ ՍԱՅՐԱՍՏՅԱՆ

ԹՈՒՐՔ - ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՇՐՋԱՆԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ (1920Թ. ՆՈՅԵՄԲԵՐ)

1920թ. նոյեմբերը ճակատագրական էր Հայաստանի Հանրապետության համար: Հոկտեմբերի 30-ին թուրքական բանակը գրավեց Կարսը՝ կամխորոշելով հայկական կողմի ռազմական պարտությունը թուրք հայկական պատերազմում: Պայքարի ծանրությունը տեղափոխվեց դիվանագիտական ոլորտ: Մոտ մեկ ամիս տևած լարված բազմակողմանի բանակցությունների արդյունքում դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում ստորագրվեց պայմանագիր Թուրքիայի հետ, որը վավերացրեց Հայաստանի և ռազմական, և դիվանագիտական պարտության արդյունքները:

Վերջին տարիներին հայրենական պատմագիտությունը, ներգրավելով զգալի քանակությամբ նոր արխիվային և այլ փաստավավերագրական նյութ, լուրջ հիմք դրեց մեր նորագույն պատմության այդ ողբերգական էջի համակողմանի և անաչառ ուսումնասիրման համար¹:

Սակայն մեզանում դեռևս հիմնականում անհասանելի են մնում թուրքական վավերագրերը: Մույն հրապարակումը առաջին քայլն է այդ բացը լրացնելու ուղղությամբ:

Թարգմանաբար ներկայացվում են, մանրամասն ծանոթագրվում ու վերլուծվում են 1920թ. նոյեմբերով թվագրված մի շարք կարևոր վավերագրեր: 'Դրանք թուրքական պետական և ռազմական բարձրագույն մարմինների ղեկավարների՝ զինված ուժերի Գլխավոր սպայակոյտի պետ և հետազայում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Իսմեթի (Ինյոնյու), արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհեթարի (Մուլլաոլլու) և Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազըմ Քարաբեքիրի միջև ծածկագրված գրագրության պատամիկներ են, ինչպես նաև Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Մուսթաֆա Քեմալի (Աթաթուրք) ղեկավար դերը արտացոլող փաստաթղթեր: Ընդգրկվել են նաև Բաքվում գործող Թուրքական Կոմունիստական Կուսակցության (ԹԿԿ) երկու հակամարտող ղեկավարների գաղտնի նամակները Քեմալին ու Քարաբեքիրին: Ըստ էության, այդ նա-

մակների հեղինակները գործում էին որպես ազգայնական ուժերի գործակալներ:

Վավերագրերը հիմնականում եղել են գաղտնի կամ հույժ գաղտնի, նրանցից մի քանիսը ծածկագրեր են: Այդ հանգամանքը հաղորդում է նրանց բացառիկ կարևոր նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս ծանոթանալ Օսմանյան կայսրության փլատակների վրա ձևավորվող նոր՝ հանրապետական Թուրքիայի «հիմնադիր հայրերի» Հայաստանի նկատմամբ քաղաքականության իրական մպատակներին, մտեցումներին, գնահատականներին, ինչպես նաև նրանց գործելավճիմն ու կիրառվող հնարքներին: Այս այն դեպքն է, երբ նրանք կարիք չեն ունեցել թաքնվել շրջահոսում դիվանագիտական արտահայտությունների հետևում, ինչի մեծ վարպետն են եղել բոլոր ժամանակների թուրք կառավարիչները, և ձևակերպել են իրենց մտքերը ամենայն հստակությամբ:

Մասնավորապես, վավերագրերը անհերքելիորեն վկայում են, որ Թուրքիայի գերագույն մպատակը պատերազմի վերջին վայրում եղել է Հայաստանի ոչնչացումը՝ որպես ինքնուրույն գործոնի: Այսպես, համաձայն ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Սեմեթ Մուհթարի Քարաբեքիրին նոյեմբերի 8-ին ուղարկված ծածկագրում տեղ գտած հստակ ձևակերպման, «բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի»²:

Յավոք, հայ քաղաքական ընտրանին ի գործու չեղավ ժամանակին բացահայտել այդ մպատակադրվածությունը, ինչը և զգալի չավտվ պայմանավորեց Հայաստանի պարտությունը նաև դիվանագիտական ճակատում: Թուրքիայի հետ խաղաղության մասին բանակցություններ վարելու մպատակով կազմված պատվիրակության ղեկավար ու նախկին վարչապետ և արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյանը հետագայում իր հուշագրություններում խոստովանում էր. - «...Մեր պատվիրակությունը կը կարծեր, որ թուրքերը կը ցանկանան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը, որը օգտակար էր իրենց պետական շահերու տեսակետեն, ինչպես որ այդ մասին շարունակ կը հայտարարեին թուրք պետական գործիչները»³:

Վավերագրերը ցույց են տալիս, որ քննալականների իրական պատկերացումները Թուրքիայի պետական շահի վերաբերյալ տրամադորեն այլ էին: Նրանց իրական մպատակները պարզելու համար կարևոր նշանակություն ունի Մուսթաֆա Քեմալի ելույթը ԹԱՄԺ-ի 1920թ. նոյեմբերի 18-ի փակ նիստում, որտեղ նա, հենվելով Գլխավոր սպայակույրի եզրահանգումների վրա, նշում է, որ Հայաստանի դեմ ռազմական գործողությունները մպատակ ունեին ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ⁴: Այդպիսով, հերքվում է ավելի ուշ, 1927թ.,

նույն Աթաթյուրքի արտասանած հայտնի “ճառում” ի լուր աշխարհին ծանուցած Հայաստանի դեմ պատերազմի պատճառի “պաշտոնական” մեկնաբանությունը. — “1920թ. աշնանը հայերի կողմից իրականացվող վնասարար գործողությունները դարձան անտանելի: Որոշում ընդունեցինք գնալ Հայաստանի վրա”⁵:

Լավատեղյակ թուրք հեղինակները գրում են, որ Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու ծրագրի հեղինակը հենց Մուսթաֆա Քեմալն էր: Նա դեռևս 1920թ. փետրվարին հանգել էր եզրակացության, թե “կովկասյան պատը” այսինքն՝ Հայաստանը, հետևից պիտի քանդվի⁶: Քեմալականների բացահայտ պանթյուրքիստական նպատակները հաստատվում են նաև վերևում արդեն նշված վավերագրով⁷: Այնհայտ է, որ այն գաղտնի ծածկագրերը, որոնք ուղարկվում էին Անկարայից արտգործնախարարի պաշտոնականատար Մուսթաթ բեյի ստորագրությամբ, արտահայտում էին առաջին հերթին հենց Մուսթաֆա Քեմալի մտնեցումները ու գնահատականները:

Թուրքական վավերագրերը վկայում են, որ սկսելով պատերազմը թուրք պարագլուխները ունեին ավելի “համեստ” նպատակ՝ ոչնչացնել ոչ թե Հայաստանը, այլ միայն նրա զինված ուժերը: Այդ է փաստում սեպտեմբերի 20-ին Գլխավոր սպայակալության պետ Իսմեթ բեյի արձակած հրամանը Հայաստանի դեմ հարձակում ձեռնարկելու վերաբերյալ: Դիմելով Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը նա գրում է. — “Մեր բուն նպատակը հայկական զինված ուժերի ոչնչացումն է”⁸: Հրամանում նշված է, որ այդ փաստաթղթի համար հիմք է ծառայել ԹԱՄԺ-ի համապատասխան որոշումը, որը ստացել է նաև կառավարության հավանությունը⁹:

Սակայն հետագայում, մի քանի ճակատամարտերում պարտության մատնելով հայկական բանակին և տեսնելով, որ Հայաստանը մեկուսացված ու լքված է իր դաշնակիցների կողմից, Թուրքիայի ղեկավարությունը սկսեց վավախություններ մտցնել իր ծրագրերի մեջ: Այդ գործընթացը, որը կարելի է համարել թուրք – հայկական պատերազմի առանցքային իրադարձություններից մեկը, տևեց մի քանի օր և առաաջացրեց վեճեր քեմալականների ղեկավար շրջանակներում: Թուրքական աղբյուրները հնարավորություն են տալիս պարզաբանել նրա որոշ մանրամասներ:

Քարաբեքիրի հուշերից պարզ է դառնում, որ նա Կարսի գրավման հաջորդ օրը, հոկտեմբերի 31-ին, հեռագրով հայտնում է քեմալականների ռազմական նախարար Ֆեվզի փաշային (Չաքմաք) իր տարած հաղթանակի մանրամասները, նշելով, մասնավորապես, որ բռնագրավված ռազմավարի քանակը այնքան մեծ է, որ կարող է բավականացնել տասը տարի պատերազմ մղելու համար¹⁰: Ուշագրավ է, որ Քարաբեքիրի այդ հեռագիրը ստանալուց երկու օր հետո, նոյեմբերի 2-ին, ԹԱՄԺ-ի կառա-

վարությունը դիմում է Հայաստանի կառավարությանը, առաջարկելով անհապաղ սկսել բանակցություններ՝ խաղաղության հաստատելու նպատակով¹¹։ Այդ փաստաթուղթը գրված է բավական փափուկ ոճով, չի պարունակում վերջնագրային բնույթի դրույթներ և, ըստ էության, խաղաղության բանակցություններ սկսելու առաջարկ է։

Քեմալականների կողմից խաղաղության բանակցությունների վերաբերյալ նման զգուշավոր առաջարկով Հայաստանին դիմելը վկայում է, որ այդ պահին նրանք դեռևս լուրջ մտավախություններ ունեին, որ Կարսի գրավումը կարող է հանգեցնել ծանր դիվանագիտական բարդությունների և այդ պատճառով փորձում էին մեղմել իրենց ռոմանտիզմները Հայաստանի տարածքի նկատմամբ։ Ինչպես վկայում է իր հուշագրություններում Իսմեթը, Անկարայի քաղաքական շրջանակները միանշանակ մոտեցում չունեին Հայաստանում Քարաբեքիրի բանակի սրընթաց առաջխաղացման նկատմամբ։ Կային գործիչներ, որոնք կարծում էին, թե այդ հաղթարշավը կարող է վնասակար լինել ընդհանուր և վերջնական հաղթանակի հասնելու տեսանկյունից¹²։ Այդ նույն օրերին ԹԱՄԺ-ի մի քանի պատգամավորներ մույնիսկ հանդես եկան հարցապնդմամբ, պահանջելով քացատրություններ, թե ինչու՞ կառավարությունը Հայաստանի դեմ պատերազմը ընդլայնում է առանց ԹԱՄԺ-ի թույլտվության¹³։ Այս ամենը վկայում է, որ այդ օրերին քեմալականների ղեկավար շրջանակներում առաջացել էին տարածայնություններ Հայաստանի նկատմամբ հետագա գործողությունների վերաբերյալ։

Սակայն Քարաբեքիրին խորթ էին նման տատանումները։ Նա համոզված էր, որ պիտի շարունակել առաջխաղացումը դեպի Հայաստանի տարածքի խորքերը, դեպի Ալեքսանդրապոլ, և միայն դրանից հետո սկսել խաղաղության բանակցությունները։ Այդ պատճառով նա որոշում է սկսել գործել ինքնուրույն, անտեսելով կառավարության դիրքորոշումը։ Նոյեմբերի 3-ին, թողնելով Կարսում միայն հազար հոգիանոց զինված ջոկատ, որը կազմված էր նախորդին Սամսունից ժամանած «կամավորներներից», որոնք շտապել էին միանալ կանոնավոր բանակին թալանելու նպատակով, Քարաբեքիրը իր հրամանատարության տակ գտնվող բանակի առավել մարտունակ զորամիավորումներով սկսում է առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ՝ այդ կարևորագույն քաղաքը մույնպես գրավելու նպատակով¹⁴։

Միաժամանակ, դեռևս վստահ չլինելով, թե կարող է միայնակ շարունակել պարտության մատնել հայկական բանակի նահանջող ստորաբաժանումներին, Քարաբեքիրը ուղերձով դիմում է խորհրդային 11-րդ բանակի հրամանատարությանը¹⁵։ Այդ նամակը առաջին հերթին քաղաքական բնույթի փաստաթուղթ է, որտեղ մույնիսկ թույլ է տրված իրականության կռապիտ խեղաթյուրում. Քարաբեքիրը փորձելով համոզել ռուսներին, որ Հայաստանը ագրեսոր պետություն է, որ քեմալականները

սպատերազմը նրա դեմ գուտ ինքնապաշտպանական գործողություն է, այնդու՛մ է, թե հայերը սեպտեմբերի 24 – ին սկսած “ընդհանուր հարձակման” արդյունքում “զավթել են Էրզրումը”, ինչը չէր համապատասխանում իրականությանը¹⁶։ Մակայն ուղերձի բուն նպատակը շատ ավելի կոնկրետ էր. առաջարկվում էր “դաշնակից Խորհրդային Ռուսաստանին” օժանդակություն ցույց տալ Թուրքիային և “վճռական միջոցներ” ձեռնարկելով՝ վերջ տալ “դաշնակների տիրապետությանը”¹⁷։ Փաստորեն, սա առաջարկ էր ռուսներին անհապաղ նոր ռազմաճակատ բացել Հայաստանի դեմ։ Ռուսական կողմի պատասխանի մասին տվյալներ չկան։

Քարաբեքիրը չէր սխալվում, հայկական զորքերը դեռ չէին կորցրել իրենց մարտունակությունը։ Արդեն հաջորդ օրը Քըզըլչախչախի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը կատաղի դիմադրություն ցույց տվեց և զգալի կորուստներ պատճառեց հակառակորդին։ Միայն երեկոյան այն կազմակերպված լքեց դիրքերը և նահանջեց¹⁸։

Քարաբեքիրի առաջխաղացումը նախապես չէր համաձայնեցված Անկարայի հետ. ինչպես ինքն է նշում իր հուշագրություններում, Ալեքսանդրապոլի վրա հարձակման մասին “ես տեղյակ եմ ապահեզի (ընդգծումը մերն է, Ռ. Մ.) Գլխավոր սպայակալուտի հրամանատարությանը”¹⁹։ Թերևս, նա համոզված չէր, որ ներկա վտու՛ում կառավարությունը կարտոնի նրա հետագա հարձակվողական գործողությունները։

Անկարայի կառավարության զգուշավոր դիրքորոշման պատճառը արտաքին գործուն էր։ Ըստ էության, քննալականների ղեկավարները հաշվի էին առնում երեք երկրների դիրքորոշումը՝ Մեծ Բրիտանիային, Խորհրդային Ռուսաստանին և Վրաստանին։ Նրանցից ամենակարևորը, անտարակույս, երկուսն էին՝ Մեծ Բրիտանիան և Խորհրդային Ռուսաստանը։ Մակայն դեռևս վերջնականապես պարզված չէր նաև Վրաստանի դիրքորոշումը։ Կառավարական շրջանակներում կար մտավախություն, որ վրացիները, օգտվելով իրադրությունից, կարող են զավթել փաստացի անպաշտման մնացած Կարսը։ Մանավանդ, ինչպես վկայում է իր հուշերում Քարաբեքիրը, նոյեմբերի 3-ին նա ստացել էր Արդահանում տեղակայված վրացական բանակի հրամանատարի վերջնագրային բնույթի ուղերձը, որտեղ ընդգծվում էր, որ եթե թուրքերը դուրս գան Կարսից և անցնեն վրացիների նախանշած գիծը, ապա վերջիններս կհարձակվեն նրանց վրա²⁰։

Հաշվի առնելով վերևում նշված հանգամանքները, Գլխավոր սպայակալուտը, ստանալով Քարաբեքիր փաշայի զեկույցը Ալեքսանդրապոլի գրավումը նախապատրաստելու վերաբերյալ, հրամայում է . “Այդ գործողությունը վտանգավոր է։ Վրացիների հարձակումը Կարսի վրա չի կարելի բացառել։ Այդ պատճառով պիտի անհապաղ վերադառնալ

Կարս»²¹: Քարաբեքիրը անհամաձայնություն է հայտնում Գլխավոր սպայակալության այդ հրամանի հետ, չի ենթարկվում նրան և շարունակում է առաջ շարժվել Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Նրա պատասխանը հետևյալն էր. «Ճիշտ չեմ համարում թողնելով հետապնդվող և արդեն պարտված թշնամուն»՝ հմարավոր նոր թշնամու գործողությունները խոչընդոտելու նպատակով մահանջել Կարս: Եթե վրացիները իսկապես այդպիսի մի գործողություն ձեռնարկեն, ապա ես հայերին մեկ հարված ևս հասցնելուց հետո կվերադառնամ վրացիներին և քիկունքից հարվածելով՝ նրանց նույնպես պարտության կմատնեմ: Առաջխաղացումը շարունակում եմ»²²:

Ծածկագրերի վերը նշված փոխանակումը Անկարայի ու Քարաբեքիրի միջև տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին: Արդյունքում, թուրքական զորքերը, չենթարկվելով Գլխավոր սպայակալության հրամանին, նույն օրվա երեկոյան դիրքեր զբաղեցրեցին Ալեքսանդրապոլից դեպի արևմուտք գտնվող բարձրունքների վրա և այդպիսով անմիջական վտանգ ստեղծեցին քաղաքի համար: Հաջորդ օրվա առավոտյան Քարաբեքիրը ստացավ Հայաստանի կառավարության առաջարկը զինադադար հաստատելու մասին, որը ուղարկվել էր դեռևս նոյեմբերի 3-ին: Քարաբեքիրը այն փոխանցեց իր ղեկավարությանը և չսպասելով նրանից համապատասխան ցուցումների, անհապաղ ներկայացրեց հայկական կողմին վերջնագրային բնույթի մի շարք պահանջներ: Հաջորդ օրը, նոյեմբերի 7-ին, հայկական կողմը, ընդունելով վերջնագրի պայմանները, Ալեքսանդրապոլը հանձնեց թուրքերին²³: Այսպիսով, Քարաբեքիրի ինքնագլխի գործողությունները պսակվեցին անմախաղեպ հաջողությամբ: Պատերազմը, փաստորեն, ավարտված էր:

Քարաբեքիրի այդ հաջողությունը, փաստորեն, արագացրեց կառավարության և Գլխավոր սպայակալության կողմից Հայաստանի հետ պատերազմում Թուրքիայի վերջնական նպատակների վերաձևակերպման գործընթացը: Այն խտացված ձևով արտահայտվեց զինադադարի վերաբերյալ հայկական կողմին ուղղված երկու վերջնագրերի տեքստերում²⁴: Առաջինը, թվագրված նոյեմբերի 6-ով, պարունակում էր ավելի մեղմ պահանջներ, քան թե երկրորդը, որը ներկայացվել էր ընդամենը երկու օր անց՝ նոյեմբերի 8-ին: Նրանցից առաջինը արդյունք էր Քարաբեքիրի «ինքնագործունեության», որի համար, ամենայն հավանականությամբ, հիմք էր ծառայել արդեն հիշատակված Անկարայի կառավարության նոյեմբերի 2-ի համեմատաբար ավելի մեղմ պահանջներ ներկայացնող նոտան, իսկ երկրորդը գրված էր քեմալական շարժման պարագլուխների կողմից կատարված իրադրության վերագնահատումներից հետո: Նրա համար հիմք էր ծառայել ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհեթարի նոյեմբերի 8-ով թվագրված հույժ գաղտնի ծածկագիրը, որի հասցեատերը

Քարաբեքիրն էր²⁵: Այստեղ մանրամասն ներկայացված են այդ վերագնահատումների արդյունքում վերջնական ձևակերպում ստացած մոտեցումները, իչպես նաև բացատրված են դրանց շարժառիթները:

Ուսանելի է համեմատել այդ ծածկագրված փաստաթուղթը նույն օրվա ընթացքում և նույն ղեկավար գործչի կողմից ստորագրված մեկ այլ պաշտոնական փաստաթղթի հետ՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը ուղարկված և Թուրքիայի կողմից առաջարկվող խաղաղության ընդհանուր պայմանները պարունակող մամակի հետ. այսինքն դիվանագիտական բնույթի վավերագրի, որը նախատեսված էր “արտաքին օգտագործման” համար²⁶:

Այսպես, օրինակ, եթե առաջինը շեշտում էր, որ Հայաստանը որպես ինքնուրույն գործող պիտի ոչնչացվի, ապա երկրորդում խոսվում էր այն մասին, որ Թուրքիան ամեն ինչ կանի, որ օգնի Հայաստանին սննդամթերքով և կաջակցի նրա տնտեսության զարգացմանը: Հայաստանի կառավարությանը ուղղված մամակում նշվում էր, թե “թուրք – հայկական սահմանի որոշումը պիտի լինի պարզ վիճակագրության ու հանրաքվեի հարց”²⁷, իսկ ծածկագիրը բազատրում էր դիվանագիտական հնարքներից հեռու փաշային, որ այդ առաջարկի նպատակը “բխում է սահմանի որոշմանը խոչընդոտելու ձգտումից”...

Հենվելով Անկարայից ստացված նոր ցուցումների վրա Քարաբեքիրը և ներկայացրեց չափազանց ծանր պայմաններ պարունակող երկրորդ վերջնագիրը:

Հաղթանակը Հայաստանի դեմ պատերազմում արդյունք էր նաև քեմալականների լավ մտածված ու ճկուն դիվանագիտության: Սովորաբար, մեզանում ընդունված է դատել թուրքական դիվանագիտության մասին հենվելով նրա ձեռք բերած արդյունքների վրա: Սույն հրապարակումը հնարավորություն է տալիս ծանոթանալու այն մոտեցումներին ու դատողություններին, որոնցից բխել են թուրքերի գործողությունները դիվանագիտական թատերաբեմում: Այդ առումով հետաքրքրություն է ներկայացնում Հավելվածում գետեղված և նույնպես Մուեթարի ստորագրությունը կրող վավերագիրը, որտեղ ներկայացված են Անկարայի կառավարության կողմից մշակված և Հայաստանի հետ առնչվող հարցերի շրջանակներում բոլշևիկյան Ռուսաստանի նկատմամբ կիրառված դիվանագիտական մարտավարության մի շարք կարևոր դրույթների ու գործելակերպի բացատրությունները²⁸:

Այսպես, Քարաբեքիր փաշայից պահանջվում է, որ նա ռուսներին հետ քննարկումներում լինի “փափուկ” և չմոռանա, որ Խորհրդային Ռուսաստանը քեմալական Թուրքիայի միակ դաշնակիցն է: Միաժամանակ Մուեթար բեյը նրան բացատրում է, թե ինչպես պիտի օգտագործել ռուս բոլշևիկների վախը անգլիացիներից՝ համոզելով նրանց, որ եթե Վանը և Բիթլիսը անցնեն հայերի հսկողության տակ, ապա այդ “մեծա-

պես կուժեղացնի անգլիացիների դիրքերը Արևելքում”²⁹։ Որքան էլ զարմանալի կարող է թվալ, այս պարզունակ “աշխարհաքաղաքական” փաստարկները հասնում էին իրենց նպատակին...

Ուշագրավ է Քեմալի հրամանը պարունակող սույն հոդվածի Հավելվածի թիվ 7 փաստաթուղթը, որի բուն իմաստը հնառավոր է ըմբռնել միայն ծանոթ լինելով նրա նախապատմության հետ³⁰։ Սկսած 1920թ. ամռանից և մանավանդ հայ – թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողություններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ էին եկել ողտ ընդհանուր եզրեր³¹ և սկիզբ էր դրվել գաղտնի շփումների դիվանագիտությանը³², իսկ մինչ այդ Անկարայի սերտ հարաբերությունները Մոսկվայի հետ սկսել էին որոշ չափով սառել և շփումները ընդունել էին անկանոն բնույթ։ Թուրքական աղբյուրները նշում են, թե քեմալականները կարողացան ճիշտ գնահատել այդ նոր ձևավորվող իրադրությունը և ճարպկորեն օգտվել դրանից։ Հենվելով այն հանգամանքի վրա, որ հոկտեմբերի 21-ին Կ. Պոլսում անգլիացիների հավանությամբ իշխանության էր եկել հիմնականում Մուսթաֆա Քեմալի կողմնակիցներից կազմված նոր կառավարություն, որը ցանկություն էր հայտնել պատվիրակություն ուղարկել Անկարա և բանակցություններ սկսել ազգայնականների կառավարության հետ, նրանք ռուսների մտտ ստեղծեցին այն կարծիքը, որ այդ կառավարությունը, կատարելով անգլիացիների առաջադրանքը, պիտի ձգտի “Անատոլիայի շարժումը քաշել անգլիացիների կողմը, նրան կտրելով բուլշևիկյան ու իսլամական աշխարհներից”³³։ Քեմալականների այդ քայլը հասավ իր նպատակին. բուլշևիկները սկսեցին ավելի “ներբանկատորեն” հարաբերվել իրենց դաշնակցի հետ և դրսևորեցին ավելի մեծ պատրաստակամություն գնալ զիջումների³⁴։ Միաժամանակ, ԹԱՄԵ-ի կառավարությունը ջանք չէր խնայում գաղտնի շփումների միջոցով և խաղաղվելով բուլշևիկյան Ռուսաստանի հետ իր դաշնակցային հարաբերությունների փաստը համաձայնության եզրեր շոշափել անգլիացիների հետ³⁵։ Թուրք հետազոտող Սալահի Սոմյելը, հենվելով անգլիական արխիվային փաստաթղթերի վրա, գրում է, թե 1920թ. օգոստոսի կեսերից սկսած, այսինքն Սևրի դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո, Մուսթաֆա Քեմալը իր գաղտնի ներկայացուցիչների միջոցով փորձ է արել համաձայնության գալ անգլիացիների հետ, նույնիսկ խոստանալով նրանց հրամանատարության տակ դնել Քարաբեքիրի Կովկասյան բանակը և օգտագործել այն բուլշևիկների դեմ³⁶։ Նշենք, որ Քեմալը վարձում էր ներագդել անգլիացիների վրա մահ Իտալիայի միջոցով, որի ներկայացուցիչների հետ նույնպես հաստատել էր գաղտնի կապեր։ 1920թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին դրանք իրականացվում էին Քեմալի ոչ պաշտոնական ներկայացուցիչ միջոցով³⁷։ Սակայն նոյեմբերին մա ուղարկեց Հոմն իր պաշտոնական ներկայացուցիչ՝ ներքին գործերի նախարա-

րին: Սուրբանական կառավարության ղեկավարողը Հռոմում Ֆերրուի
րենյը հայանում էր Կ.-Պոլիս, որ այդ այցին իտալական կառավարական
շրջանակների կողմից տրվում մեծ նշանակություն³⁸: Այդպիսով, ապա-
հովվեց առավել բարենպաստ դիվանագիտական մթնոլորտ Հայաստա-
նի դեմ պատերազմում Թուրքիայի տեսանկյունից ռազմավարական
նշանակության նպատակների հասնելու համար: Օգտագործելով այդ
հանգամանքը քեմալականները, մասնավորապես, հրաժարվեցին հայ –
թուրքական բանակցություններում Ռուսաստանի միջնորդությունից, ին-
չի համաձայնությունը նրանք նախորդ տվել էին³⁹: Սակայն երբ պարզ
դարձավ, որ Ռուսաստանը ավելի վճռական դիրքորոշում է որդեգրել և
գործ է մտցնում Հայաստան, անմիջական շփման մեջ մտնելով Քարա-
բեքիի բանակի հետ, այդ հնարքը ժամանակավորապես կորցրեց իր
նշանակությունը և մույնիսկ սկսեց դիտարկվել որ վտանգավոր
հետևանքներով հղի: Այդ պայմաններում և հետևեց Հավելվածի թիվ 7
վավերագրում տեղ գտած Մուսթաֆա Քեմալի կտրուկ հրամանը՝ բոլոր
հնարավոր միջոցներով հերքել լուրերը անգլիացիների հետ համագոր-
ծակցելու մասին:

Այդ շրջանում ակտիվ գործունեություն էր ծավալել Մուսթաֆա
Մուփհին, որը 1920թ. մայիսին բնակություն հաստատելով Բաքվում,
կարդացել էր դառնալ թուրքական կոմունիստական շարժման հեղինա-
կավոր առաջնորդ⁴⁰: Նա միանգամայն կիսում էր քեմալականների մո-
տեցումները Հայաստանի նկատմամբ⁴¹: Մեր կողմից թարգմանաբար
ներկայացվող նրա մամակը Մուսթաֆա Քեմալին (վավերագիր թիվ 8)
վկայում է, որ ԹԿԿ-ն Մուսթաֆա Մուփհիի ղեկավարությամբ իրականում
գործում էր որպես քեմալականների ռազմական գործողությունները Հա-
յաստանի դեմ սատարող քարոզչական, լրահավաք և հետախուզական
կառույց: Միաժամանակ, նա միջնորդի դեր էր ստանձնել Բաքվում
գտնվող ռուս բոլշևիկների ղեկավարների և քեմալականների ներկայա-
ցուցիչների միջև: Մասնավորապես, ինչպես երևում է Մուսթաֆա Քեմա-
լին հղած նրա մամակից, Մուսթաֆա Մուփհին ոչ միայն կազմակերպել
էր Բաքու ժամանած ԹԱՄԻ-ի կառավարության ներկայացուցիչ Սեմ-
դուհ Շևքեի հանդիպումը Ի. Ստալինի հետ, այլ նաև հնարավորություն
էր ստացել ներկա լինել նրանց գրույցին⁴²:

Քարաբեքիի վաղեմի ընկերոջ՝ այդ շրջանում Արևմտյան ռազ-
մաճակատի հրամանատար Իսմեթ փեյի անձնական մամակը (վավերա-
գիր թիվ 6) հետաքրքիր է առաջին հերթին նրանով, որ պարզորոշ ցույց է
տալիս, որ հաղթանակը Հայաստանի նկատմամբ, ըստ էության, փրկեց
Օսմանյան կայսրության իշխանությունների դեմ ապստամբած ազգայ-
նականներին⁴³:

Բնութագրելով հայ-թուրքական պատերազմի ժամանակ Քարա-
բեքիի գործունեությունը պիտի հաշվի առնել այն հանգամանքը, որ նա,

ըստ էության, խաղում էր երկակի խաղ. ցուցադրելով հավատարմություն Մուսթաֆա Քեմալին, նա միաժամանակ չէր խզում իր կապերը այդ շրջանում ակտիվ գործունեություն ծավալած երիտթուրքերի պարագլուխներից՝ տխրահռչակ Էնվերի փաշայի հետ⁴⁴ և մույնիսկ որոշ դեպքերում գործում էր համաձայն վերջինիս ցուցումների⁴⁵։ Էնվերը իր հերթին ամեն կերպ աջակցում էր Քարաբեքիրին։ Մասնավորապես, իր ղեկավարությամբ Բաքվում ստեղծված «Թուրքական կոմունիստական կուսակցության» հիմնադիրներից հայտանի երիտթուրք գործիչ Ֆուաթ Սաբիրի⁴⁶ (Աղաջըք) գործում էր որպես Քարաբեքիրի «կապավոր պաշտոնյա» և ուղարկում էր նրան զեկուցագրեր։ Դրանցից մեկը, որտեղ անդրադարձ կա հայ-թուրքական պատերազմին, թարգմանաբար զետեղված է սույն հոդվածի Հավելվածում, որպես թիվ 5 վավերագիր⁴⁷։

Ներկայացվող վավերագրերի մեծ մասը վերցված է Հայաստանի դեմ պատերազմելու նպատակով ստեղծված Արևելյան ռազմաճակատի հրամանատար՝ Քյազըմ Քարաբեքիր փաշայի գրչին պատկանող գրքերից⁴⁸։ Նրա ղեկավարած բանակը, որին միացել էին բազմաթիվ զինված ավազակախմբեր, ներս խուժեց Հայաստան, ամենուրեք տարածելով մահ ու ավերածություն։ Այդ «հերոսությունների» համար Քարաբեքիրին շնորհվեց *Ֆերիքի* (զեներալ-լեյտենանտի) զինվորական կոչում⁴⁹, իսկ պատերազմի ավարտից հետո նա պարգևատրվեց «Կամաչ և կարմիր ժապավեններով Անկախության մեդալով»⁵⁰ և մտավ հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմության տարեգրության մեջ որպես «Արևելքի նվաճող»⁵¹։ Իր անկախ հայացքներով աչքի ընկնող թուրք պատմաբան Ջեմալ Քութայը ժամանակին Քարաբեքիրի գործունեությանը տվել է ավելի իրական գնահատական, բնութագրելով այն որպես «Հայաստանի ոչնչացում»⁵²։

Ասկայն այդ փառաձայն թուրք փաշան չգոհացավ իր պետության կողմից ստացած պարգևներով։ Նա որոշեց ուսումնասիրել իր իսկ կողմից սրի քաշած ժողովրդի պատմությունը և բացատրել նրան, թե նա «որտեղից է եկել և ուր է գնում»⁵³։ Ինքնավստահաբար հայտարարելով, որ ծանոթ է հայերի մասին գոյություն ունեցող համարյա ողջ գրականությանը⁵⁴, Քարաբեքիրը հանգեց մի «եզրակացության», որը մույնիսկ հայերի նկատմամբ թուրքական վերնախավի ամենատարբեր ներկայացուցիչների կողմից տասնամյակների ընթացքում արտահայտված տեսակետների շրջանակում աչքի է ընկնում բացառիկ ցինիզմով։ Պատմության խորքերը «թափանցած» թուրք փաշան պարզելով, որ «գոյություն ունեն ապացույցներ հայերի» թուրքական ծագում ունենալու մասին⁵⁵, պահանջեց. «Հայերը պիտի անեն հետևյալը. մամուլով նրանք պիտի սեր տարածեն թուրքի նկատմամբ...»⁵⁶։

Չխորանալով Քյազըմ Քարաբեքիր փաշայի քաղաքական հայացքների ու գործունեության մանրամասների մեջ նշենք միայն, որ նրա

հարաբերությունները Մուսթաֆա Քեմալի հետ սկսած ազգայնական շարժման տարիներից լարված են եղել, քանի որ Քարաբեքիը համարել է, որ Քեմալը նսեմացնում է իր որոշիչ դերը Հայաստանի նկատմամբ ձեռք բերած հաղթանակում, իսկ վերջինս էլ իր հերթին խանդով է վերաբերվել Քարաբեքերի փառքին ու հեղինակությանը⁵⁷: 1926թ. Քարաբեքերը նույնիսկ մեղադրվել է Քեմալի դեմ մահափորձ նախապատրաստող երիտթուրքերի հետ համագործակցելու մեջ ու ձերբակալվել է⁵⁸:

Այդ ամենի պատճառով Քարաբեքերի հեղինակած հիմք տասնյակ գրքերից շատերը, մասնավորապես նրանք, որտեղ խոսվում է Հայաստանի դեմ պատերազմի և հետագա իրադարձությունների մասին, արգելվել են և հրատարակվել են միայն նրա մահից հետո: Այսպես օրինակ, 1933թ. տպագրության պատրաստված “Մեր անկախության պատերազմի հիմքերը” խորագիրը կրող նրա հուշագրությունների գրքի բոլոր օրինակները արտակարգ լիազորություններով օժտված Անկախության դատարանի որոշմամբ տպարանից բռնագրավվել և ոչնչացվել են⁵⁹: Խուզարկվել է նաև Քարաբեքիի տուներ և բռնագրավվել է նրա անձնական արխիվի զգալի մասը, սակայն ձեռագրերը և վավերագրերի բնագրերը չեն հայտնաբերվել⁶⁰: Արխիվի փրկված մասը սկսվել է հրատարակվել միայն Աթաթյուրքի ու Քարաբեքիի մահից հետո: Այդ հրապարակումներից առանձնանում է “Մեր անկախության պատերազմը” հուշագրությունների հսկայածավալ (1171 էջանոց) գիրքը, որը հրատարակել են նրա դուստրերը: Նրանք առաջաբանում նշում են, որ ձեռագիրը տպագրվում է նույնությամբ, առանց տառ անգամ փոխելու⁶¹: Գիրքը լույս տեսավ 1960թ. հուլիսին, երբ երկիրը դեռ չէր հասցրել հանդարտվել մայիսին տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո⁶²: Թերևս, այդ հանգամանքը նպաստեց Հայաստանի նկատմամբ թուրքական քաղաքականության իրական նպատակները քացահայտող վավերագրերի երևան գալուն⁶³:

Հետագայում լույս տեսան Քարաբեքիի հեղինակած մի շարք գրքեր ևս: Դրանցից ներկա հրապարակման տեսանկյունից օգտակար էր նրա այն աշխատությունը, որտեղ առաջին անգամ թուրքական պատմագրության մեջ հարուստ և նոր աղբյուրագիտական հենքի հիմքի վրա քացահայտվում էր երիտթուրքական կուսակցության նշանակալից դերը քեմալական շարժման մեջ⁶⁴: Քարաբեքիի դուստրերը, որոնք հրատարակիչներն են նաև այս հատորի, հատուկ ընդգծում են, որ իրենք նրա թողած ձեռագրից հրապարակում են նույնությամբ, “ոչ մի բառ չավելացնելով և ոչ մի բառ դուրս չթողնելով”⁶⁵: Ըստ էության, նրաց այդ մոտեցումը, հնրավորություն տվեց գիտական շրջանառության մեջ դնել թուրք – հայական պատերազմի հետ անմիջականորեն առնչվող բազմաթիվ թուրքական արխիվային վավերագրեր:

Օգտագործել ենք նաև Թուրքիայում լույս տեսած մի շարք այլ հրապարակումներ, մասնավորապես, Մուսթաֆա Քեմալի կողմից ստորագրված վավերագրերը կամ նրա խորհդարանական ելույթները պարունակող ժողովածուները⁶⁶: Այդ հրապարակումները կարևորվում են նրանով, որ հնարավորություն են ընձեռում ծանոթանալ ազգայնական շարժման առաջնորդի մտեցումները արտացոլող այնպիսի վավերագրերի հետ, որոնք տեղ չեն գտել իր իսկ կողմից խնամքով ընտրված և պաշտոնական պատմագրության կողմից կանոնականացված “ճառում”⁶⁷: Մասնավորապես, այստեղ հրապարակված չէ թեկուզ մեկ փաստաթուղթ, որը կվերաբերվեր թուրք – հայկական պատերազմին⁶⁸: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է մեր կողմից օգտագործված ժողովածուներից մեկի հրատարակիչը, այնտեղ տեղ գտած վավերագրերը “Աթաթուրքին ճանաչել ցանկացողների համար կարևոր և հավաստի աղբյուր են”⁶⁹:

Կարծում ենք, թարգմանաբար ներկայացվող վավերագրերը պատկերացում են տալիս այն լայնածավալ ու բազմաբնույթ գործունեության վերաբերյալ, որ ծավալել էին քեմալականները թուրք – հայկական պատերազմի եզրափակիչ փուլի ընթացքում: Նրանք օգնում են ավելի հստակ և առարկայական դարձնել մեր ընկալումները Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից մշակված և իրականացված ծավալապաշտական քաղաքականության առանձին դրսևորումների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն են տալիս հասկանալ թուրքական վերնախավի մտածելակերպի որոշ առանձնահատկություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԹՈՒՐԶԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

1

Արտաքին գործերի նախարարի պաշտոնականատար Մուհթար բեյի⁷⁰ ծածկագիրը Արևելյան ռազմաճակատի հրամատար Քյազըմ Քարաբեքիր փաշային (8 նոյեմբերի 1920թ.)⁷¹

Անկարա

8/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը

Կասկած չկա, որ Հայաստանի զինադադարի առաջարկը այս պահին, երբ մա մեկուսացված է և արևմտյան, և արևելյան աշխարհներից, նպատակ ունի խուսափել վրա հասնող աղետից: Ուժեղանալուն պես Հայաստանը, բնականաբար, կաշխատի իրականացնել Սևրի պայմանագրով իր վրա դրված Արևելքի հետ մեր կապը կտրելու պարտականությունը, ինչպես նաև հույների հետ համատեղ կխաթարի մեր կյանքն

ու գարգացումը: Անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահ-մեղական շրջանակի կենտրոնում, այդ դաժան ժանդարմի պարտակա-նությունից արտի համոզմունքով հրաժարվի և որոշի իր րախտը լիովին կապել թուրքիայի և իսլամականության հետ: Այդ պատճառով, բացար-ձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյու-թապես մեջտեղից վերացվի: Դրա հետ մեկտեղ, քանի որ այդ նպատակի իրականացումը կախված է մեր հզորության ընձեռած հնարավորու-թյունից և ընդհանուր քաղաքական իրադրության բարենպաստությունից, ապա անհրաժեշտ է վերևում նշված կարևոր նախապայմանների համա-ձայնեցված նախապատրաստում: Դրանից բխում է, որ քննարկման ա-ռարկա չի կարող լինել հայերի հետ պարզ մի զինադադարի համաձայ-նության արդյունքում մեր հետ քաշվելը: Հայերին փոխանցվող զինադա-դարի հիմնադրությոնները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղա-սեր երևալուն: Սակայն իրականում նրանց արդյունքը պիտի լինի մեր նպատակի աստիճանաբար նախապատրաստման ու հասունացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է գորացրել հայկա-կան բանակը և բռնագրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգաբնակչության իրա-վունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողությունը հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա և այդպի-սով մեր ձեռքում պահել թուրքիան Ադրբեջանին կապող բոլոր ճանա-պարհները: Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկ-ված ու փափուկ ձևով՝ ինչպես խաղաղության պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աչքերում մշտա-պես խաղաղասեր երևալու պայմանով:

Հայկական կառավարությանը հանձնելու նպատակով այսօր Ձեզ ուղարկված զինադադարի պայմանների⁷² առաջին կետով սահմանի վե-րաբերյալ հանրաքվեի սկզբունքի ընդունումը բխում է Հայաստանի հետ սահմանների վերջնական որոշմանը խոչընդոտելու ձգտումից: Կարող եք ժամանակավորապես ընդունել Բրեսա Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ձեռքից նախ և առաջ սահմանի վերաբերյալ գրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչըն-դոտել բանակցությունների փակուղի մտնելուն: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտության համար հող նախապատրաստել՝ սահմանի մյուս կողմում մնացող մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով: Պիտի պայմանագրի մեջ մտցնել կետեր, որոնք կապահովեն հնարավորինս արագ թշնամու ձեռքից զենքի բռնագ-րավումը և նրա բանակի գորացրումը: Անհրաժեշտ է հատուկ ջանքեր

գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն:

Կառավարության իրական նպատակը պարունակող այս հրահանգը գաղտնի է: Այն նախատեսված է միայն Ձեզ համար:

Խնդրում ենք գրավոր հայտնել այս գաղտնագրի լրիվ վերծանման մասին:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար
Ահմեթ Մուխթար

2

Մուսթաֆա Քեմալի ելույթը Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում Էրզրումի պատգամավոր Իսմայիլ բեյի⁷³ և իր ընկերների Հայաստանի հետ խաղաղության պայմանների վերաբերյալ գրավոր հարցապնդման և արտաքին գործերի վոխնախարար Մուխթար բեյի պատասխանի կապակցությամբ
(18 նոյեմբերի 1920թ.)⁷⁴

Մուսթաֆա Քեմալ փշ.⁷⁵ (Անկարա). – Ուզում եմ հիշեցնել մի կետի մասին և Ժողովին ծանոթացնել ռազմական խնդիրներին վերաբերող տեղեկություններին, որոնք ես ստացել եմ ռազմական գերատեսչությունից: Ինչպես նշում է մեծապատիվ պարոնը⁷⁶, հայերը ընդունել են նախապես առաջարկված զինադադարի պայմանները: Այդ զինադադարի պայմանների հիմքում դրված են եղել երկու հիմնարար դրույթ: Առաջինը. զենք բռնագրավել հայկական բանակից: Երկրորդը. ելնելով գոյություն ունեցող իրադրությունից ստեղծել չեզոք գոտի այն գծի միջև, մինչև որը կնահանգի հայկական բանակը, և այն սահմանի միջև, որը մենք հետագայում պիտի պաշտպանենք: Սակայն դրանից հետո վերսկսվեցեցին ռազմական գործողությունները: Նախկին գիծը շատ առաջ տարանք: Նախկինում գտնված դիրքերից մեր զորքերը առաջ ընթացան ոչ միայն արևելյան ուղղությամբ, այլ նաև կենտրոնից, ներառյալ Շաքախից, դեպի հարավ: Այդ պատճառով, զինադադարի մասին համաձայնության այն մասը, որը վերաբերում էր սահմաններին, իհարկե, ենթարկվեց վավտիությունների: Դրա վերաբերյալ մեր Գլխավոր սպայակույտը հանդես եկավ մի քանի նոր առաջարկներով: Նրանցից մեծ մասի մեջ առանձնապես կարևոր դրույթներ չկան. այս մեկը նոր գծից մի քիչ ավելի արևմուտք է, այն մյուսը՝ մի քիչ ավելի առաջ է: Սակայն այնտեղ նոր տեսակետ էլ է պաշտպանվում: Այն հետևյալն է. հարավից Ադրբեջան տանող ճանապարհները պիտի լինեն լիովին անվտանգ: Ահա այս-

սյիսի առաջարկ ունի Գլխավոր սպայակալույտը, պարտնայք: Ձինվորականները ճիշտ ժամանակին հանդես եկան իրենց առաջարկով:

3

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Մուխար Բեյի
ծածկագիրը Քյազըմ Քարաբեքիր փաշային
(20-21 նոյեմբերի 1920թ.)⁷⁷

Անկարա
20-21/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամատար Նորին Գերագանցութ-

յուն

Քյազըմ Քարաբեքիր փաշային

Ի պատասխան 13/11/1336⁷⁸ հեռագրի⁷⁹

1...

2 - Տարածվել են լուրեր, թե Արևելյան ռազմաճակատում մեր հաղթանակների անվերջացման շարանի հետևանքով հայկական լրագրերը սգո սև շրջանակներով են լույս տեսել, իսկ մահմեդականները չափազանց ուրախ ու խանդավառ են: Եվրոպայի հետ շփումների պակասը և կապի դժվարությունը խոչընդոտում են Կովկասի իրադարձությունների արձագանքի մասին ավելի լիարժեք տեղեկություններ ստանալուն: Այստեղ հասած ամենավերջին եվրոպական լրագրերը թվագրված են հոկտեմբերի 20-ով և նրանց մեջ այդ թեմայի վերաբերյալ մանրամասներ չկան:

3 - Ռուսական խորհրդային կառավարությանը...⁸¹, որ մեր հարձակման պատճառներն էին. հայերի կողմից իրագործվող կոտորածները, դաշնակների հրաժարումը մեզ հետ խաղաղություն կնքելուց, ինչպես նաև, նրանց ցանկությունը որպես անգլիական իմպերիալիզմի գործիք՝ մեր արևելյան վիլայեթները լիովին գրավել և կապ հաստատել Իրաքում գտնվող անգլիական զորքերի հետ... ... Հնարավոր չեղավ պարզել, թե՞ արդյոք այդ հարցերին նվիրված համապատասխան հեռագիրը հասել է Մոսկվայում մեր ներկայացուցիչ Բեքիր Սամիին⁸², հայտնի չեն նաև Ռուսաստանի կառավարության կարծիքը և մտեցումները այդ խնդիրների վերաբերյալ: Օգտվելով այս առիթից մեկ անգամ ևս կարևորությամբ խնդրում եմ ամեն գնով ապահովել Ռուսաստանի հետ հուսալի հեռագրային կամ ռադիո կապ:

4 - Հաշվի առնելով բարեկամության մասին պայմանագրի նախատեսվող ստորագրումը, ինչպես նաև մեր հարաբերությունների առանձնահատկությունները, խնդրում եմ, որ երբ կապ կհաստատեք ռուսական զորքերի հետ, Ձեզ նրանցից հեռու չպահեք: Պիտի հաշվի առնել, որ երկու ազգերը համատեղ պայքարում են համաշխարհային իմպերիալիզմի

դեմ, և Ռուսաստանը միակ մեծ տերությունն է, որը մեզ ճանաչել է, մեզ հետ հարաբերություններ է հաստատել և կարող է մեզ օգնել, քեկուզ և անճշան:

Եթե քննարկվի Չեզ հայտնի Վանի, Բիթլիսի խնդիրը⁸³, ապա այդ հարցում վարվեք փափուկ, բացատրեք, որ ազգերի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից այն անընդունելի է և քաղաքական առումով անիրականանալի: Բացատրեք նաև, որ Անկարայի կառավարության կազմավորման նպատակը Ազգային Ուխտի կողմից ճանաչված սահմանների շրջանակում քաղաքականապես ու տնտեսապես լիովին անկախ Թուրքիայի ստեղծումն է, և եթե նա այդ ծրագրի շրջանակներից դուրս գա, ապա ժողովուրդը լիովին կկորցնի խանդավառությունը, մեկ անգամ ևս կեիսասքափվի և իշխանությունը կանցնի Ստամբուլին: Այդ դեպքում անգլիացիները Ֆերիք փաշային⁸⁴ սաղորդաձամ դարձնելու միջոցով կտիրեն ամբողջ խալիֆայության ժողովրդին, այդ թվում նաև Անատոլիային, ինչը Ռուսաստանի բոլշևիկների համար և Կովկասում, և Ասիայում չափազանց անբարենպաստ հետևանքներ կունենա:

Երկրորդը. երբ ակնհայտ դառնա, որ Վան, Բիթլիս մտած հայերը կարող են Իրաքում գտնվող անգլիացիների հետ հեշտությամբ միանալ, ապա դա մեծապես կուժեղացնի անգլիացիների դիրքերը Արևելքում: Լոնդոնի խորհրդարանում Իրաքի մանդատի հարցի քննարկումների ժամանակ նախկին վարչապետ Ասքվիթը արդեն իսկ հայտարարել է, թե Մոսկույը պաշտպանել կարողանալու համար անհրաժեշտ է հասնել Սև ծով և եթե հայերին թույլ տրվի իջնել այդքան դեպի հարավ, ապա անգլիական իմպերիալիզմի համար այդ շատ մեծ ծառայություն կլինի: Կարծում եմ, այդ անհրաժեշտ է բացատրել...⁸⁵ Մյուս կողմից, խնդրում եմ, որ ամեն պատեհ առիթով զգացնել տաք, որ Անկարայի կառավարությունը նախապատրաստվում է իրականացնել մեր երկրի համար անհրաժեշտ արդիական սոցիալական բարենորոգումներ ու հեղափոխություն, ինչը օտարների միջամտությունը կդարձնի անհնարին:

Պարոն, խնդրում եմ Գլումրիում⁸⁶ հայերի վերաբերյալ մեր դիրքորոշումը ներկայացնել համաձայն նվաստիս կողմից շարադրածի:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար
Ահմեթ Մուխթար⁸⁷

4

ԹԱՄԺ-ի նախագահ

Մուսթաֆա Քեմալի ցուցումը խաղաղության պատվիրակներ
մեծապատիվ պարոններ Համիթին⁸⁸ ու Նեջաթիին⁸⁹
(23 նոյեմբերի 1920թ.)⁹⁰

23 նոյեմբերի 1920թ.

Հայերի հետ մեր բանակցություններում ոչ մի այլ կողմի միջամտությունն ու միջնորդությունը քննարկման առարկա լինել չեն կարող: Մասնավորաբար, կարող եք հայտարարել, որ անընդունելի է նրանց միջնորդությունը, ովքեր կցանկանան ներկայացնել հայերին և նրանց պաշտպանելու նպատակով կուզենան խառնվել գործին: Հստակ է, որ մենք ղյուզն անգամ չենք հրաժարվի մեր իրավունքներից: Արտգործնախարարության կողմից Նորին գերագանցություն Ջյազըմ Քարաբեքիր փաշային համապատասխան տեղեկությունները արդեն ուղարկվել են, պարոնայք:

ԹԱՄԺ-ի նախագահ
Սուքաֆա Քեմալ

5

Կապավոր պաշտոնյա դոկտոր Ֆուաթ Սաբիթ բեյի⁹¹
նամակը Ջյազըմ Քարաբեքիր փաշային
(25 նոյեմբերի 1920թ.)⁹²

Բաքու

25 նոյեմբերի 1920

Նորին Գերագանցություն Ջյազըմ Քարաբեքիր փաշային

93

Բոլորը ձգտում են օգուտ քաղել հարձակվողական գործողությունից⁹⁴: Դաշնակները ու հայ ազգայնականները, ինչպես նաև մահմեդական կապիստալիստները տարածում են լուրեր, թե թուրքերը միացել են անգլիացիների հետ, հարձակվել են բուլշևիկների վրա և նրանց մեջտեղից վերացնելուց հետո պիտի այդպիսով վերահաստատեն թուրքիայի անկախությունը: Այդ լուրերի միջոցով մահմեդական հարստությունները ձգտում են պահպանել իրենց ձեռքից գնացող հարստությունները: Իսկ հայերի նպատակն է սրել թուրքերի և բուլշևիկների հարաբերությունները և թուրքերին միայնակ թողնել: Ես համոզված եմ, որ Սուփհին մույնպես մեծ վարպետությամբ օգտվեց դրանից⁹⁵: Թուրքերի առաջխաղացումը կասկածելի ներկայացնելու համար նա առիթը բաց չթողեց և աշխատեց հավատացնել տալ, որ եթե ինքը չլինի, ապա ազգայնամոլ, իմպերիալիստ, պանիսլամիստ Թուրքիայում տեղի կունենան բազմաթիվ արկածախնդրություններ: Այդ միջոցով նա ձգտեց ամրապնդել իր խարխալած դիրքերը: Ինձ ծանոթ չըջանակներում, հանդիպելով իմ ծանոթների հետ ես հայտարարում եմ, որ այդ անհիմն է, որ թուրքերը երբեք իմպերիալիստական ու կապիտալիստական Եվրոպայի հետ չեն մերձենա: Եթե մույնիսկ ընդունենք, որ իրենց գոյությունը պահպանելու համար նրանց դեկավարները կարող են որոշ շեղումներ թույլ տալ, ապա նրանցից, որոնք արդեն պարզաբանել են իրենց հայացքները, չի կարելի սպասել, որ նրանք մարդասպանների հետ միանալով, դուրս կգան հեղափոխության

դեն: Անհավանական է նաև, որ նրանք, ովքեր արդեն ազատվել են ստրկականության իշխանությունից՝ անօրինական համաձայնության կզան նրա հետ, այդպիսով իրենց դնելով հավերժական տնտեսական ստրկության մեջ:

Ես ասում էի, որ եթե մույնիսկ ղեկավարների մոտ այդպիսի հակում առաջանա, ապա Թուրքիայի ժողովուրդը արդեն շատ ետևում է թողել այն ժամանակը, երբ ականջակից էր լինում ամեն ասածին: Նա այժմ ունի այնպիսի մի իշխանություն, որը ի գործ է իրականացման ճանապարհ հարթել ժողովրդի ճակատագրի և ցանկությունների համար:

Դրա հետ մեկտեղ, ռուսական հեղափոխական շրջանակներում թուրքերի նկատմամբ մեծ կասկած գոյություն ունի: Համոզված եմ, որ այն անտեղի է և որ մոտակա ապագայում իր անհիմն լինելը ակնհայտ կդառնա: Անհրաժեշտ է այդ կասկածը ժամանակին վերացնել և բախտախնդիրների խարդավանքներին տեղ չտալ...⁹⁶

Դոկտոր
Ֆուաթ Սափիթ

6

Իսմեթ բեյի նամակը Քյազըմ Զարաբեքիր փաշային
(28 նոյեմբերի 1920թ.)⁹⁷

Սիրելի եղբայրս, իմ շատ սիրելի եղբայր Քյազըմ ջան:

Այսօր Սաֆֆեթը⁹⁸ գալիս է: Ֆուաթ փաշայի⁹⁹ հետ միասին ձեզ մոտ կլինեն: Ինչքա՛ն երջանիկ են նրանք: Ի՛նչ մեծ երջանկություն է քեզ հետ տեսնվելը: Չես կարող պատկերացնել, թե ինչքա՛ն եմ կարոտել, ինչքա՛ն եմ ուզում տեսնել քեզ: Այժմ իմ ամենամեծ ցանկությունն է կողքիդ մնալու համար մի տաս – տասնհինգ օրով արձակուրդ ստանալ: Սակայն ներկայումս դա անհնարին պատրանք է...

Արևելյան գործողությունը¹⁰⁰ մեզ և մեր գործը վերականգնանք: Այնքան ծանր դրության մեջ էինք, այնքան նեղված էինք, որ բացարձակ անհրաժեշտություն էր դարձել մի օղանցք բացել, որ իրադրությունը կարողանար շունչ քաշել: Այլախի տրյումֆյամբ այն բացեցիր դու՝ արժանի հաջողությամբ ու համակարգվածությամբ: Նախախնամության ու ճակատագրի կողմից քեզ վերապահված է մեր ազգին ու պատմությանը ավելի մեծ ծառայություններ մատուցել: Այլսեղ քեզ նվիրաբերեց մեր ազգին: Հատկապես Մուսթաֆա Քեմալը չի պատկերացնում, թե ի՞նչ կարելի է անել, որ հնարավոր լինի ցույց տալ և արտահայտել իր շնորհակալությունը: Բոլորը մույն դրության մեջ են¹⁰¹:

Դրա հետ մեկտեղ, Արևելքը մի նրբաբնույթ փուլի մեջ է մտել: Եթե հնարավոր լինի այսպիսով մի արդյունքի հասնել, ապա փրկության ճանապարհը իրապես բացված կլինի: Ինչպես և ինչ ձևով այդ տեղի կունենա՝ դա այստեղ քննարկել չարժե, քանի որ գործը առաջ է շարժվում:

Արևմուտքում մեր դրությունը ծանր է, Բյազըն: Չինամթերքի պակաս, անիշխանություն, ինտրիգներ, ամենակարևորը, իհարկե, զինամթերքն է....¹⁰²

Իսմեն¹⁰³

7

Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալի հեռագիրը
Արևելյան ճակատի հրամանատարությանը
(30 նոյեմբերի 1920թ.)¹⁰⁴

Արևելյան ճակատի հրամանատարությանը

Անկարա, 30 նոյեմբերի 1920թ.

Բարձրում Թուրքիայի ներկայացուցիչ Մեմդուհ Շեվքեթ Բեյին
Թիֆլիսում Թուրքիայի ներկայացուցիչ Բյազըն Բեյին¹⁰⁵

Ինչպես պարզ է դառնում տարբեր տեղերից եկող լուրերից, անգլիացիները դիմում են բոլոր միջոցներին՝ բոլշևիկների և մեր, ինչպես նաև իսլամական երկրների միջև, հարաբերությունները խաթարելու նպատակով: Նրանք հույս ունեն, որ երբ այդ նրանց հաջողվի, նրանք երկու հասարակություններին կարող են առանձին առանձին ճնշել: Այդ նպատակով տարածվող ասեկոսների թվում է այն, որ անգլիացիների կողմից Ադրբեջանը մեզ հանձնելու վտիսարեն մենք Կովկասում բոլշևիկների դեմ ճակատ կստեղծենք. դրա նման էլի մի քանի խաբեություններ են շրջանառվում: Դուք իրավասու և պարտավոր եք ձեր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով անհապաղ և հստակորեն հերքել այդ տեսակ բոլոր ասեկոսները:

Անգլիացիների, ֆրանսիացիների կամ էլ իտալացիների կողմից ուղղակի կամ Ստամբուլում նրանց կողմից իշխանության բերված կառավարության կողմից մեզ խաղաղության առաջարկ չի արվել:

Մուսթաֆա Քեմալ

8

Թուրքական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական վարչության նախագահ Մուսթաֆա Աուփիհիի նամակը

Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալին
(1920թ. նոյեմբեր¹⁰⁶)¹⁰⁷

Ազգային Մեծ Ժողովի նախագահ Նորին Գերագանցություն
Մուսթաֆա Քեմալ փաշային

Բաքու

1...¹⁰⁸

2. Արևելյան ռազմաճակատում ապստամբ բանակների հաջող հարձակումը¹⁰⁹ այստեղ լավ տպավորություն է առաջացրել: Քանի որ Ձեզանից վերջին ժամանակներին ոչ մի լուր կամ կապավոր այստեղ չի հասել, ապա իրադրությունը ուսումնասիրելու և ավելի հաստատուն հարաբերություններ հաստատելու նպատակով ընկեր Միլիվանիի ղեկավարությամբ ձեր կողմերը մի պատվիրակություն է ուղարկվել:

Այդ հարձակման ընթացքում հայկական սահմաններից ներս չափից ավելի խորանալը հասարակական կարծիքի մեջ որոշ կասկածներ է առաջացրել, որոնք մեր կողմից տարածված հաղորդագրությունների միջոցով փարատվել են: Մեր կողմից նշվել է, որ այդ հարձակումը վնաս չի պատճառի հայ բանվորին ու գյուղացուն և որ նրա նպատակն է պատժել դաշնակցական կառավարությանը, որը լինելով Անտանտի գործակալը, չի խորշել կատարել բազմաթիվ խաբեություններ ու ոճրագործություններ:

Ըստ ամենայնի, մեր այդ հաղորդագրությունները հանրային կարծիքը դրական է ընկալել, քանի որ այս անգամ չկար քարոզչություն թուրքերի բարբարոսությունների մասին, ինչպես նաև ղեկավարում սովորաբար լինում էր անցյալում: Նույնիսկ հայ կոմունիստները մասնավորապես հանդես եկան որպես թուրքական հարձակման կողմնակիցներ և շարունակում են տպագրել լուրեր, որոնք Անաստիայի ապստամբներին ներկայացնում են որպես արդարացի կողմ:

Ամեն ղեկավար, կարծում ենք, ավելորդ չէ նշել, որ հնարավորություն չտրվեց օգտագործել “հայկական կոտորածը” որպես միջոց Ռուսաստանի և Եվրոպայի պրոլետարների կարծիքը Անատոլիական շարժման դեմ ուղղելու և մեզ խաբեա որակելու համար:

3. Վրանգելի անհաջողության և Անաստիայի կողմից Արևմտյան ու Արևելյան ճակատների կայունացման հետևանքով վերջին օրերին ուժեղացել է վտանգը, որ Անգլիան դաշնակցային հարաբերությունների մեջ կմտնի ԱՄԺ-ի¹¹⁰ կառավարության հետ: Այդպիսի միությունը կհանգեցնի Անաստիայի ապստամբների մինչև այժմ ձեռք բերածի կորուստին: Միաժամանակ անգլիացիների պատճառով Անաստիան կզրկվի Սովետներից ուղարկվելիք նյութական ու բարոյական ամեն տեսակ օգնությունից: Այդ պատճառով կարծում ենք, որ մենք չէինք սխալվել, երբ

ասել էինք, քե ասպտամբները ձգտում են ունենալ Ռուսաստանի հետ ավելի ուժեղ ու գործուն հարաբերություններ:

4. Նախապես արդեն հայտնել էինք, որ մեր կուսակցության կողմից Անատոլիական շարժմանը օգնելու նպատակով կազմվել է Թուրքական Կարմիր Գունդ: Այն սրանից մոտավորապես երեք շաբաթ առաջ Կենտրոնական կոմիտեի անդամ ընկեր Մեմեթ Էմինի¹¹¹ նրամանատարության ներքո Նախիջևանի վրայով ուղարկվեց Քյազըմ Զարաբեքիր փաշայի տրամադրության տակ: Սակայն այդ ժամանակ Արևելյան ռազմականության հարձակման անցնելու և դաշնակների կողմից Նախիջևանի ճանապարհը փակելու պատճառով հնարավոր չեղավ զինվորներին հասցնել Անատոլիա: Մեր գունդը անցում կատարեց Քերյուսիդից¹¹² մինչև Արփաչայ և ավարտեց այն հաջողությամբ՝ հակառակորդի ուժերին պատճառելով մեծ վնաս: Մեր զինվորների կորուստները կազմեցին 11 սպանված և մինչև 20 քեթև վիրավոր: Զանի որ ներկայումս իշխում է ձմեռը, ապա այդ պատճառով մեր զինվորները քաշվեցին հանգստի դեպի Ադրան¹¹³: Բոլոր անհրաժեշտ միջոցները կձեռնարկվեն նրանց Դելիջանի¹¹⁴ վրայով ուղարկելու նպատակով:

5. Արբեջանում ԱՄԺ-ի ներկայացուցիչ Մեմդուհ Շելքեք բեյի¹¹⁵ Բաքու ժամանելուն պես մեր կողմից որոշվեցին նրա պարտականությունների հաջող կատարման համար անհրաժեշտ միջոցները և նա ծանոթացվեց հայտնի հեղափոխական գործիչների հետ, մասնավորապես, Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի անդամ ընկեր Ստալինի հետ, որը վերջին օրերին գտնվում է այստեղ:

Ենթադրում ենք, որ ընկեր Ստալինի հետ մինչև երկու ժամ տևած այդ գրույցի արդյունքները Մեմդուհ Շելքեք բեյի կողմից Ձեզ ներկայացվել են: Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է դրան մի երկու - երեք կետ ևս հավելել:

Ընկեր Ստալինը առաջին հերթին նշեց, որ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը Անատոլիայի ազգային ասպտամբական շարժումը դիտարկում է որպես կարևոր պատմական մի իրադարձություն, որը պիտի օրինակ ծառայի և որին պիտի հետևեն Արևելքի բոլոր ազգերը: Այդ շարժման ուժեղացման համար Ռուսաստանը պատրաստ է զնալ ամեն տեսակի գոեղությունների: Դրանից հետո նա բացատրեց, որ մեծ չափով չօգնելու պատճառը այն է, որ իրականում միայն վերջերս է հաջողվել Անատոլիայի հետ հուսալի կապ հաստատել: Մյուս կողմից, խոսակցություններն այն մասին, որ Անատոլիական շարժումն սկսելուց հետո Կարմիր բանակը մնացել է չեզոք, չեն համապատասխանում իրականությանը: Նա հայտնեց, որ արդեն այսօր Նախիջևանի գրավմանը մասնակցում են կարևոր ուժեր, իսկ Դրիմում ռազմական գործողություններն ավարտվելուն պես Կովկասյան ռազմաբաժնի կմովի առաջին պլան:

Ընկեր Ստալինը խոսեց նաև երրորդ կարևոր հարցի մասին:

Էնվեր փաշայի և իր ընկերների լավ ընդունելությունը Ռուսաստանում պայմանավորված է նրանց աշխատանքով ի օգուտ ապստամբ Անատոլիայի: Նրանց տրվում է նյութական օգնություն: Արդյո՞ք կա հնարավորություն, որ նրանք փորձեն ստաջացնել ներքին ապստամբություններ և քայքայեն Անատոլիայի ռազմաճակատը: Մեմդուհ Շելքեթ բեյը պատասխանեց, որ օգնությունը Էնվեր փաշային և իր ընկերներին կարելի է շարունակել և պարզաբանեց դրա պատճառները:

Այստեղ վաղուց ի վեր կոմունիստի անվան տակ գործող դ-ր Ֆուաթ բեյը¹¹⁶, որն իրականում ոչ մի կապ չունի կոմունիզմի հետ և որի հարաբերությունները մեր կազմակերպության հետ խզված են, աշխատում է Անատոլիայի շարժումը ներկայացնել որպես անկազմակերպ¹¹⁷ մի շարժում, որին հատուկ է միայն ազգայնականությունը: Վերոհիշյալ այդ անձնավորությունը, հենվելով սրանից մի քանի ամիս առաջ Բեքիր Սամի բեյի կողմից հայտնած տեղեկատվության վրա, հայտարարեց, թե ինքը Անատոլիայի ԱՄԺ-ի դեսպանն է Ռուսաստանում և մի կնիք պատրաստել տալով՝ Ադրբեջանի կառավարությունից պահանջեց չորս միլիոն ռուբլի, այդպիսով ստեղծելով տգեղ մի իրադրություն:

Կարծում ենք, որ այն անձնավորությունը, որը պիտի ներկայացնի [Թուրքիան – Ռ. Ս.] Ռուսաստանի Խորհրդային Կառավարության առջև, պիտի ընտրված լինի ապստամբական շարժման մեջ դիրք ձեռք բերած գործում հեղափախականների քվից:

7...¹¹⁸

ԹԿԿ Կենտրոնական կոմիտե
Նախագահ՝ Մուսթաֆա Մուսիհի
Քարտուղար՝ Էփենդ Նեժաթ¹¹⁹

RUBEN SAFRASTYAN

TURKISH DOCUMENTS FROM THE PERIOD OF TURKISH-ARMENIAN WAR (NOVEMBER 1920).

For the first time in Armenian historiography, the present article is examining the Turkish documents from the last period of Turkish-Armenian war. Article deals mainly with the confidential and decrypted documents, which were intended to use only in the internal circulation. The authors of documents were the leading representatives of emerging kemalist political elite, including Mustafa Kemal himself. The thoughtfully analyses of documents allows author to come to conclusion that the final goal of kemalist Turkey during this war was the elimination of Armenia as an independent political factor in South Caucasus.

As addition to the article, there are attached the texts of eight translated into Armenian documents with the detailed commentary.

ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Երվանդ Սարգսյան*, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա. Երևան, 1995: *Է. Ա. Չոկրաբյան*, 1920թ. թուրք – հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997: *Գալուստ Գալոյան*, Հայաստանը և Մեծ Տերությունները 1917 – 1923թթ. Երևան, 1999: *Լենդրուշ Խուշշույան*, Հայաստանի քաժանուճը 1920 թվականին. Երևան, 2002:
2. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanlığına. Ankara. 8/11/1336. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.
3. *Ալ. Խատիսխան*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Աթենք, 1930, էջ. 263:
4. Տես այդ մասին. [Atatürk], Erzurum Mebusu İsmail Beyle Rüfekasınm, Ermenistan Sulh Şeraiti Hakkında İstizah Takriri ve Hariciye Vekâletci Vekili Muhtar Beyin Cevabı Münasebetiyle Sözleri. - [Atatürk] Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990, s. 322.
5. *Kemal Atatürk*, Nutuk. Cilt: II, 1920 – 1927. İstanbul, 1961, s. 486.
6. Տես այդ մասին քննարկված պաշտոնական պատմագրության հիմնասյուներից մեկի հետևյալ աշխատությունը. *Tevfik Bıyıkoglu*, Atatürk Anadolu'da (1919 - 1921). Ankara, 1959, s. 19.
7. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanlığına, Ankara. 8/11/1336. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.
8. Այդ ուշագրավ փաստաթուղթը առանց կրճատումների հրատարակել է իր հուշագրություններում Խմբքը: Տես. *İsmet İnönü*, Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: *Sabahattin Selek*. Ankara, 1985, s. 222.
9. Ibid.
10. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 898.
11. Տեքստը տես. *Ալ. Խատիսխան*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Աթենք, 1930, էջ. 245 - 246:
12. *İsmet İnönü*, Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: *Sabahattin Selek*. Ankara, 1985, s. 222.
13. Siyasi Kırğmliklar: 15 Gün Gizli Tutulan Görev. – Tercüman, 04. 05. 1993.
14. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 899.
15. Տեքստը տես. Телеграмма начальника штаба 11-ой Красной армии Пугачева в Реввоенсовет РСФСР с изложением турецкой версии событий в Армении, предоставленной кемалистским командованием Восточного фронта. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария *Ю. А. Барсегов*. Москва, 2003, с. 218 – 219. Հայերեն այդ փաստաթուղթը հատվածաբար հրատարակել է Է. Չոկրաբյանը. Տես. *Է. Ա. Չոկրաբյան*, 1920թ. թուրք – հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997, էջ. 287:

16. Տես Քարաբեքիրի ուղերձի տեքստում. Телеграмма начальника штаба 11-ой Красной армии Пугачева в Реввоенсовет РСФСР с изложением турецкой версии событий в Армении, предоставленной кемалистским командованием Восточного фронта. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. А. Барсегов. Москва, 2003, с. 218.
17. Մեջբերումն ըստ. Է. Ա. Չոհրաբյան, 1920թ. թուրք – հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997, էջ. 287:
18. Նույն տեղում, էջ. 273 - 274:
19. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 899.
20. Ibid.
21. Ibid.
22. Ibid.
23. Ibid.
24. Վերջնագրերի տեքստերը տես. *Միմն. Վրացյան, Հայաստանի հանրապետություն.* Երևան, 1993, էջ. 511 – 513:
25. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanlığına, Ankara, 8/11/1336. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 901.
26. Տեքստը տես. *Sulh Şartlarımız*, Ankara, 8/11/1920. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 900.
27. Ibid.
28. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanı Kâzım Karabekir Paşa Hazretlerine, Ankara, 20 - 21/11/1336. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 905 - 906.
29. Ibid., s. 906.
30. *Mustafa Kemal*, Doğu Cephesi Komutanlığı'na, Ankara, 30 Kasım 1920. - Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. Yayınlayan: *Mustafa Onar.* C. II, Ankara, 1995, s. 210-211.
31. Մանրամասն այդ մասին տես հետևյալ մեմագրությունում. *Ազապի Նասիպեան*, Բրիտանիա և Հայկական Հարցը 1915 – 1923. Պեյրոն, 1994:
32. *Salahi R. Sonyel*, Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 – Mart 1921). – *Belleten*, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 359 – 360.
33. Համաձայն թուրք հետազոտող Է. Թելլալի այդ նպատակն էր հետապնդում ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի մախարաբի պաշտոնակատար Ահմեթ Մուխթարի հոկտեմբերի 22-ի մամակը Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինին: Տես. *Erel Tellal*, Sovyetlerle ilişkiler. – Türk dış politikası: Kurtuluş savaşımdan bugüne olgular, belgeler, yorumlar. Editör: *Baskın Öran.* (Cilt I: 1919 - 1980). İstanbul, 2002, s. 170. Այստեղ Ահմեթ Մուխթարի պաշտոնը սխալմամբ նշված է որպես “արտաքին գործերի ժողովրդական կոմիսար”:
34. Այդ առումով հատկանշական է Ի. Ստալինի հեռագիրը Վ. Լենինին, որտեղ նա խորհուրդ է տալիս ձգձգել պայմանագրի ստորագրումը Հայաստանի հետ, քանի որ այն կարող է վանել քեմալականներին և կողոյղի նրանց

- համաձայնության գալ անգլիացիների հետ: Shu. Телеграмма И. Сталина В. Ленину, Баку, 5 ноября 1920г. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев Ю. А. Барсегов. Москва, 2003, с. 216.
35. Shu այդ մասին. *İlhan Uzgöl, Ömer Kürkçüoğlu*, İngiltere ile İlişkiler. - Türk Dış Politikası: Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler. Yorumlar. Editor: *Başkan Oran*. (Cilt I: 1919 - 1980). İstanbul, 2002, s. 141 - 142.
 36. Shu այդ մասին. *Salahi R. Sonyel*, Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 - Mart 1921). - Belleten, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 359 - 360.
 37. Ibid., s. 356 - 357.
 38. Shu այդ փաստաթղթը. Maslahatgüzâr Ferruh Bey'den Hâriciye Nâzırı Safa Bey'e, Roma, 24 Kasım 1920. - Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), HR. SYS, 2607/6_17, Osmanlı İmparatorluğu Büyükelçiliği, 118/73 numaraya ek. - <http://www.devletarsivleri.gov.tr/vavin/osmanli/belgelerleatalurk/065.htm>
 39. TBMM Başkanı *Mustafa Kemal*, Barış Delegeleri Hamit ve Necati Beyefendilere, 23 Kasım 1920. - Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. Yayınlayan: *Mustafa Onar*. C. II, Ankara, 1995, s. 207.
 40. Մուսաֆա Մուսիհին համարվում էր "Մոսկվայի մարդը": Shu այդ մասին, օրինակ. *Dogan Avcioğlu*, Millî Kurtuluş Tarihi 1836'den 1995'e. İstanbul, 1976, s. 621 - 624.
 41. Shu. *Mete Tunçay*, Türkiye'de Sol Akımlar 1908 - 1925. 3. Baskı. Ankara - İstanbul, 1978, s. 228.
 42. TKP Merkez Heyeti Reisi: *Mustafa Suphi*, Kâtibi: *Ethem Nejat*, B. M. M. Reisi Mustafa Kemal Paşa Hazretlerine, Bakû [? Kasım 1920]. - *Mete Tunçay*, Türkiye'de Sol Akımlar 1908 - 1925. 3. Baskı. Ankara - İstanbul, 1978, s. 231 - 233.
 43. *İsmet*, 28/Teşrinisani/1336. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960, s. 903.
 44. Այդ շրջանում Քարաբեքերի և Հնվերի միջև փոխանակված բազմաթիվ նամակները զետեղված են Քարաբեքերի գրքերից մեկում. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967.
 45. Shu այդ մասին. *Murat Çulcu*, Spekülatif Marjinal Tarih Tezleri. 6. Baskı. İstanbul, 2000, s. 281 - 282.
 46. Shu այդ մասին. *Doğan Avcioğlu*, Millî Kurtuluş Tarihi 1836'den 1995'e. İstanbul, 1976, s.487.
 47. Doktor *Fuad Sabit*, Kâzım Karabekir Paşa Hazretlerine, Bakû, 25 Teşrinisani 1920. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967, s. 78 - 80.
 48. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960 և *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967.
 49. *Muhammed Erat*, Kâzım Karabekir Paşa'nın Ermeniler Üzerine Harekâtı (1920). - Kafkas Araştırmaları, II, 1996, s. 102.

50. *Shu. Muhammed Erat, Halide Yılmaz, Kâzım Karabekir'in Hayatı ve Çanakkale Savaşlarındaki Rolü*. - T.C Çanakkale Onsekiz Mart Üniversitesi Eğitim Fakültesi Tarih Öğretmenliği, 4: Çanakkale Savaşı Semineri, 2003, s. 17.
51. *Shu. Şerafettin Turan, Türk Devrim Tarihi II: Ulusal Direnişten Türkiye Cumhuriyeti'ne*. İstanbul, 1992, s. 202.
52. *Shu նրա գրչին պատկանող հետևյալ հետազոտությունը. Cemal Kutay, Karabekir Ermenistan'ı Nasıl Yok Etti? İstanbul, 1956.*
53. *Քարաբեքիրը 1946թ., երբ հերթական անգամ արդիականացել էր Հայկական հարցը, ավարտեց հայերին նվիրված իր գրքի ծնագիրը, որը այդպես էլ վերնագրված էր. “Հայերը որտեղի՞ց են եկել, ո՞ր են գնում”: Այն լույս տեսավ տասնամյակներ անց՝ “Հայկական դոսյե” խորագրի ներքո: Shu. Kâzım Karabekir, Ermeni Dosyası. Yayına Hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994.*
54. *Kâzım Karabekir, Ermeni Dosyası. Yayına Hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994, s. 29.*
55. *Ibid., s. 40.*
56. *Ibid., s. 42.*
57. *Մտաթափա Քեմալի և Զյաղում Քարաբեքիրի փոխհարաբերությունների պատմության վերջինիս մանրամասն մեկնաբանությունը տես. [Kâzım Karabekir], Kâzım Karabekir Anlatıyor. Yayına Hazırlayan Uğur Mumcu, Beşinci Basım. İstanbul, 1990.*
58. *Հետազայում մա կանգնել է դատարանի առջև և արդարացվել է: Shu այդ մասին. Erik Jan Zürcher, The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 – 1926. Leiden, 1984, p. 152 – 154.*
59. *Shu այդ մասին. Feridun Kandemir, Kâzım Karabekir'in Yakılan Hatıraları Meselesinin İçyüzü. İstanbul, 1964, s. 90 – 115.*
60. *Shu այդ մասին. Faruk Özerengin, Sunuş. - Kâzım Karabekir, İstiklâl Harbimizin Esasları. İstanbul, 1992, s. 5.*
61. *Shu այդ մասին. Hayat Feyzioğlu, Emel Özerengin, Timsal Ayasbeyoglu, Önsöz. - Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. VI.*
62. *Shu այդ մասին Erik Jan Zürcher, Young Turk Memoirs as a Historical Source: Kazım Karabekir's İstiklal Harbimiz. - Middle Eastern Studies Vol. 22, No. 4, October 1986, p. 565.*
63. *Ուշագրավ է, որ գրքի հրապարակումից մի քանի ամիս անց թուրքական իրավապահ համակարգը սրափվեց և սկսեց հետապնդել հրատարակչին, սակայն արդեն ուշ էր: Shu. Ibid., p. 565 – 566.*
64. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967.*
65. *Merhum General Karabekir Kızları, Önsöz. - Kâzım Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967, s. III.*
66. *[Atatürk] Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: Kâzım Öztürk. Ankara, 1990; [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. C. II. Yayınlayan: Mustafa Onar. Ankara, 1995,*

67. *Kemal Atatürk*, Nutuk. Cilt: I - III. İstanbul, 1961. Մեր պատմաբանների կողմից օգտագործվել է այդ գրքի առաջին հրատարակության ռուսերեն թարգմանությունը. *Мустафа Кемаль, Путь новой Турции*. 1919 - 1927. Т. 1 - 4. Москва, 1929 - 1934.
68. Մուսթաֆա Քեմալի «Ըառի» երրորդ հատորը, որը վերնագրված է «Փաստաթղթեր», պարունակում է 299 պաշտոնական վավերագիր: *Shu. Kemal Atatürk*, Nutuk. Cilt: III: Vesikalar. İstanbul, 1961.
69. *Kâzım Öztürk*, İkinci Baskımın Önzösesü. - [Atatürk] Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990, s. III.
70. Ահմեթ Մուսթաֆա, հետազայում ընդունել է Մոլլաօղլու ազգանունը (1870-1934): Դիվանագետ, փոխարտգործնախարար, 1920 - 1921թթ. հաճախակի փոխարինում էր երկարատև արտասահմանյան գործուղումներում զանվոդ քեմալական Թուրքիայի առաջին արտգործնախարար Բեքիր Սամիին: Եղել է Օսմանյան կայսրության դեսպանը Հունաստանում, Ուկրաինայում, համըրապետության տարիներին զբաղեցրել է դեսպանի պաշտոններ Մոսկվայում ու Վաշինգտոնում: Բազմիցս ընտրվել է Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր:
71. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960, s. 901.
Փաստաթուղթը հայերեն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ: Նրա առանձին հատվածների հայերեն թարգմանությունը ժամանակին տպագրել է Ե. Ղ. Սարգսյանը: *Shu. Երվանդ Սարգսյան*, Հայադավություն. - Հայաստանի աշխատավորուհի, 1991, N. 3, էջ. 1 - 2 և *Երվանդ Սարգսյան*, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա. Երևան, 1995, էջ. 170 - 171: Այդ երկու թարգմանությունները զգալիորեն տարբերվում են մեկը մյուսից և շեղվում են բնագրից: Փաստաթղթին անդրադարձել է նաև Վահագն Տատրյանը, տպագրելով նրա մեկ հատվածի անգլերեն թարգմանությունը, տես. *Vahagn N. Dadrian*, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995, p. 358.
72. Ի նկատի ունի Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը փոխանցվելիք փաստատուղթը:
73. Հետազայում ընդունել է Արսլան ազգանունը:
74. Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990, s. 321 - 322. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
75. փաշա:
76. Թերևս, ի նկատի ունի արտաքին գործերի փոխնախարար Մուսթաֆա բեյին:
77. Հրատարակված է. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960, s. 905 - 906. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
78. 1920թ. նոյեմբերի 13:
79. Քարաբեքիրը իր հուշագրություններում այդ վավերագիրը չի հրատարակել:
80. Ծածկագրի առաջին կետում բնութագրվում են Կ. Պոլսի սուլթանական կառավարության գործունեության հետ առնչվող որոշ խնդիրներ: Այդ հատվածը չենք թարգմանել:

81. Հեռագրի թուրքերին տեքստում այս տեղում դրված է քազմակետ, ամենայն հավանակությամբ, քառը հմարավոր չի եղել ընթերցել կամ վերծանել՝ այդ տարիներին հեռագրային կապը անհոռալի էր: Նախադասության իմաստը հուշում է, որ այստեղ պիտի լիներ “հայտնել ենք” կամ մեկ այլ մույնիմաստ արտահայտություն:
82. Բեքիր Սամի (հետագայում ընդունել է Քումդուխ ազգանունը), (1865 – 1933, որոշ տեղեկություններով՝ 1932): Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի քաղաքական գործիչ, դիվանագետ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ղեկավար պաշտոններ է զբաղեցրել օսմանյան կառավարման համակարգում: Քեմալականների առաջին և երկրորդ կառավարություններում զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի պաշտոնը (1920 – 1921թթ), ղեկավարել է այդ կառավարության առաջին պատվիրակությունը Մոսկվա (1920թ. հուլիս – սեպտեմբեր): Նրա դերը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ դեռևս վերջնականապես պարզաբանված չէ, քանի որ առկա են իրարամբեմ վկայություններ: Տես, օրինակ, Ա. Ամստոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալիս փաշա: Երևան, 1990, էջ. 31 և British Foreign Office Dossiers on Turkish War Criminals. By Vartkes Yeghiayan. La Verne, 1991, p. 325:
83. Ի նկատի ունի խորհրդային կառավարության առաջարկը հանձնել Վանը, Բիթլիսը և Մուշը Հայաստանին:
84. Տերիք փաշա, դամաթ՝ սուլթանական ընտանիքի ներկայացուցիչ (1853 - 1923): Օսմանյան պետական գործիչ, հինգ անգամ զբաղեցրել է սադրեղազամի (կառավարության նախագահի) պաշտոնը: Ղեկավարել է թուրքական պատվիրակությունը Սևրում և ստորագրել է Սերի դաշնագիրը:
85. Այդպես է թուրքերին տեքստում: Ըստ ամենայնի, վավերագրի այդ հատվածը հրատարակչի համար եղել է անընթեռնելի:
86. Ի նկատի ունի քանակությունները Ալեքսանդրապոլում:
87. Բնութագրելով այս և հաջորդ փաստաթուղթը Քարաբեքիրը գրում է.
 “Արևելյան գործողության ընթացքում Անկարայի հետ տեղի է ունեցել մահ որոշ մամակափոխանակություն ընդհանուր իրադրության վերաբերյալ:” – Տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 904:*
 Ուշագրավ է, որ իր պատասխան ծածկագրում Քարաբեքիրը հայտնել է իր մտտեցումները Ահմեթ Մուհարիի մամակի միայն այն կետերի վերաբերյալ, որոնք առնչվում էին Կ.Պոլսի սուլթանական կառավարության գործունեության հետ, ամտեսելով Հայաստանի դեմ պատերազմի մասին կետերը: Այդ պատճառով Քարաբեքիրի վերևում նշված ծածկագիրը սույն հրապարակման մեջ չենք ներգրավել: Տեքստը տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 906 - 907.*
88. Համիթ բեյը (հետագայում ընդունել է Քափալը ազգանունը) այդ շրջանում եղել է Էրզնրումի վալի (նահանգապետ): Հայտնի է եղել “Խելագար Համիթ” մականունով: Ստորագրել է ի թիվս այլոց Ալեքսանդրապոլի 1920թ. պայմանագիրը: Համարվում է Մոաթաֆա Սուփիիի սպանության կազմակերպիչներից:
89. Սյուլեյման Նեջաթի բեյ, հետագայում ընդունել է Գյումերի ազգանունը (1890 - 1944), քեմալական շարժման մասնակից, կրթական և

- հրատարակչական ոլորտների գործիչ: ԹԱՄԺ-ի պատգամավոր է եղել Էրզրումից, աչքի է ընկել իր հակահայկական ելույթներով ու հարցազննություններով: Ստորագրել է ի քիվա այլոց 1920թ. պայմանագիրը: Հետագայում դասավանդել է թուրքերեն լեզու Կ.Պոլսի Գալաթիյո հայկական վարժարանում: Հեղինակել է հուշագրությունների ոչ ծավալուն զրքույկ. *Süleyman Necati Güneri*. Hatıra Defteri. İstanbul. 1999.
90. Տպագրված է. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. C. II. Yayınlayan: *Mustafa Onar*. Ankara, 1995, s. 207. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
91. Դ-ոկտոր Ֆուաթ Սաքիթ, հետազայում ընդունել է Աղաջը ազգանունը: Երիտթուրքական կուսակցության գործիչ, պամթուրքիստական շարժման ակտիվ մասնակից, «Թյուրքական օջախ» ծայրահեղական կազմակերպության հիմնադիրներից ու ղեկավարներից, տես այդ մասին, մասնավորապես, *Tarık Zafer Tunaya*, Türkiye'de Siyasal Partiler. Cilt I: İkinci Meşrutiyet Dönemi, 1908 – 1918. Genişletilmiş İkinci Baskı. İstanbul, 1988, s. 432. Եղել է հայոց ցեղասպանությունն իրականացրած «Թեշքիլյաթ-ը Մահտանի» («Հատուկ կազմակերպություն») անդամ, տես այդ մասին. *Abdullah Muradoglu*, Teşkilat-ı Mahsusa. – *Yeni Şafak*, 23. 11. 2005. Ազգայնական շարժման տարիներին եղել է երիտթուրքերի կողմից հիմնադրված ԹԿԿ ղեկավարներից, հանդես է եկել կապավորի դերում էմվերականների, քեմալականների և ռուս թուշկիկների միջև: Նրա կյանքի ու գործունեության մասին տես. *Ali Birinci*, Dr. Fuat Sabit. – *Türk Yurdu*, 1999, Sayı.139-141, s. 45 – 58.
92. Տպագրված է. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967, s. 78 – 80. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
93. Նամակի առաջին մասում նկարագրվում է Մուսթաֆա Սուսիիի գործունեությունը Բաքվում: Այդ հատվածը թարգմանված չէ:
94. Ի նկատի ունի Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա և Կարսի գրավումը:
95. Ի նկատի ունի Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա:
96. Նամակի մնացած հատվածը, որը առնչություն չունի թուրք-հայկական պատերազմի հետ, թարգմանված չէ:
97. Հրատարակված է. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 903. Գրված է Էսքիշեհիրից: Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
98. Գնդապետ Սաֆֆեր բեյ, հետազայում ընդունել է Արըքան ազգանունը (1888 – 1947): Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի ռազմական ու պետական գործիչ, դիվանագետ: 1920թ. մոյեմբերի 14-ին նշանակվել է Ալի Ֆուաթի՝ Մոսկվա մեկնող դեսպանության կցորդ:
99. Ալի Ֆուաթ փաշա, հետազայում ընդունել է Ջեքեսոյ ազգանունը (1883 – 1968): Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի ռազմական ու պետական ղեկավար գործիչ, դիվանագետ: 1920թ. մոյեմբերի 21-ին նշանակվել է քեմալական Թուրքիայի առաջին դեսպանը Խորհրդային Ռուսաստանում, 1921թ. ստորագրել է Մոսկվայի ռուս-թուրքական

պայմանագիրը: Թուրք-ռուսական բանակցությունների վերաբերյալ հրատարակել է հուշագրությունների գիրք: *Şbu. Ali Fuat Cebesoy, Moskova Hatıraları* (21/1/1920 – 2/6/1922). İstanbul, 1955.

100. Ի կյատի ունի պատերազմը Հայաստանի դեմ:
101. Ինչպես երևում է ներքևում բերված Քարաբեքիրի մեկնաբանություններից, նրան չէին գոհացրել Մուսթաֆա Քեմալի և այլոց պաշտոնական շնորհավորանքները:
102. Քարաբեքիրի հրատարակած տեքստը սրանով ավարտվում է:
103. Այս մամակի մասին Քարաբեքիրը իր հուշերում գրում է. "... Մուսթաֆա Քեմալ ու Ֆեվզի փաշանաներից, ինչպես նաև այլոց կողմից ստացած պաշտոնական շնորհավորանքներից ինձ համար ավելի մեծ արժեք ունեին Իսմեթ բեյի մամակը և հեռագիրը, քանի որ Արևելյան ռազմաճակատի դերը Անկախության պատերազմում և նրա նշանակությունը մեր ազգային գործի համար մա տեղադրել էր մեր պատմության շրջանակների մեջ ": *Şbu. Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 902 – 903: Իսմեթի այդ ծածկագրված հեռագիրը գրված է 1920թ. դեկտեմբերի 9-ին և այդ պատճառով չի ներգրավված սույն հրապարակման մեջ: Տեքստը տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 903.
104. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. C. II. Yayınlayan: *Mustafa Onar*. Ankara, 1995, s. 210-211. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
105. Քյազըմ բեյ, հետագայում ղնդունել է Դիրիք ազգանունը (1880 - 1941): Արհեստավարժ զինվորական, հանրապետական շրջանում՝ պետական գործիչ: Մաս և կազմել Մուսթաֆա Քեմալի մեծապետ շրջապատի:
106. Ամիսը որոշված է թուրք հրատարակչի կողմից:
107. *Mete Tunçay, Türkiye'de Sol Akımlar 1908 – 1925*. 3. Baskı. Ankara – İstanbul, 1978, s. 231 – 233. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
108. Նամակի սկզբնական հատվածը, որտեղ խոսվում է Թուրքիայում կոմունիստական գործունեության հնարավորությունների մասին, չենք թարգմանել:
109. Նկատի ունի ազգայնականների զինված ուժերի Արևելյան ռազմաճակատը, որի հրամանատարն էր Քարաբեքիրը:
110. ԱՄԺ՝ [Թուրքիայի] Ազգային Մեծ Ժողով:
111. Թուրքական աղբյուրները նշում են, որ ԹԿԿ այդ գործիչը գտնվել է Էմվերի ազդեցության տակ և հետագայում քեմալականների մատնել է էրզրում ժամանած Մուսթաֆա Սուփիիին, այդպիսով փրկելով իր կյանքը: *Şbu այդ մասին. Mete Tunçay, Türkiye'de Sol Akımlar 1908 – 1925*. 3. Baskı. Ankara – İstanbul, 1978, s. 215 – 216.
112. Հայերեն՝ Գորիս
113. Թերևս, պիտի լինի Ադղամ:
114. Հայերեն՝ Դիլիջան:
115. Սեմդուհ Շեվքեթ, հետագայում ղնդունել է Էսենդալ ազգանունը (1883 - 1952): Երիտթուրքական "Միություն և առաջադիմություն" կոմիտեի և քեմալական Հանրապետական-ժողովրդական կուսակցության ղեկավար

գործիչ, ղեկավար, արձակագիր: 1920-1924թթ. եղել է Անկարայի կառավարության ղեկավարողը Բաքվում: Մեղսակից է Հայոց ցեղասպանության ոճրագործության, ինչի մասին 1919թ. նշվել է թուրքական ռազմական արտակարգ ատյանի դատավճիռներից մեկում: *Şev. Osman Selim Kocahanoglu*, *İttihat – Terraki'nin Sorgulanması ve Yargılanması: Meclis-i Mebusan Tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ercmni Tehcirin İçyüzü, Divan-ı Harb-i Orfi Muhakemesi. İstanbul, 1998, s. 521.*

116. Խոսքը վերևում հիշատակված ղոկտոր Ֆուաթ Սաքիթի (Աղաջըք) մասին է:
117. Թուրքերեն տեքստում օգտագործված է “չորան” (çoban) քաղոց, որը տվյալ դեպքում ունի “կոպիտ”, “անտաշ” իմաստները:
118. Այդպես է թուրքերեն տեքստում, վեցերորդ կետը քաջակայուն է:
119. Էթեմ Նեմաթը (1887 - 1921) երիտթուրքերի իշխանության շրջանում մասնակցել է պանթյուրքիստական շարժմանը, հետագայում ակտիվորեն ներգրավվել է կոմունիստական շարժման մեջ և Մուսթաֆա Մուփհիի հետ սպանվել է Զեմալի ու Զարաբեքիի հրամանով: